

րենիս ընդունէին զկերակուրն» (174): Վարդանանց պատերազմէն վերջ լեռներն ապաստանող քաղաքացիք նոյնպէս «համբերէին խոտարուտ կերակրոցն» (նոյն, 107): Եւ Յուսիայ ի Դուին գերած աշնուազգի տիկնայք «չոչր անգամ եւ աշտուռն հաց ոչ գտանէին ցյազ», կ'ըսէ ուրիշ մը (Որբ. 140): — Ի՞նչ կրնար լինել ուրեմն սովորական աղքատին սնունդն ալ, եթէ ոչ նոյնպէս «հաց աշտուռն» որ է չոր (Ոսկ. Մտթ. Ա, 693, Որբ. 116). եւ փոխանակ գինւոյ՝ «դիւրագին ջրովն զնոյն պէտս ծարաւոյն վճարէ», կ'ըսէ Մանդակունին (74): Այսպէս՝ լեռնականին ճաշակի եւ զարգացման աղքատութիւնը, եւ կիրթ քաղաքացւոյն վերահաս զրամական չքաւորութիւնը՝ մի եւ նոյն արդիւնքը կուտան սեղանին վրայ: Եւ կ'երեւի՝ թէ այդ երկու պարագայք միանգամայն կային Սասնեցւոց քով, որոնք ոչ միայն «լի աշխատութեամբ եւ սաստիկ տառապանօք» կը ճարէին իրենց ապրուստը, այլ եւ էին «գազանաբարոյք, արիւնարբուք», ցրուած անտառաց ու փապարաց մէջ եւ լերանց կատարները, առանց ընկերական կենաց ու կազմակերպութեան (Արծ. 134):